

ԳԵՈՒՆԵՄԻՆՈՂՆԵՐԻ ԷԿՈԼՈԳՈՎ-ՅԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԵՎ ՊԱՅՔԱՐԻ ՈՒ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼԻՉԱՑԻԱՅԻ ՅԱՐՑԵՐԸ

ԴԱՎԻԴՅԱՆՏ Ա.Վ.

ՀՀ Առողջապահության Լախարարության «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվ.
առողջապահության ազգային ինստիտուտ», Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 10/21/2014թ., ընդունված է՝ 07/29/2014թ.

Գեոհելմինթոզները շարունակում են մնալ կարևոր, հաճախ մոռացության մատնված առողջապահական խնդիր: Տվյալ խնդրի արդիականությունը բացատրվում է Հայաստանի տարածաշրջանային պայթլոնոգիայում նաև նշված հելմինթոզների թերի հետազոտությամբ:

Գեոհելմինթոզների դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների կազմակերպման, մշակման համար մեծ նշանակություն ունի հողում նրանց ձվիկների զարգացման ժամանակահատվածի իմացության մասին:

Արտաքին միջավայրում գեոհելմինթոզների ձվիկների վարքագծի Էկոլոգիական օրինա-չափությունների իմացությունը (այն է՝ մետամորֆոզի տևողությունը, ժամկետը, հասունացման ցիկլերի քանակը և այլն), թույլ են տալիս ըստ համաճարակաբանական պրոցեսի հստակ տարանջատել տարածքները: Անցկացվել է հանրապետության Էկոլոգո-ֆենոլոգիական և համաճարակաբանական համալիր զունավորում, միաժամանակ՝ ըստ գեոհելմինթոզների խմբի (ասկարիդոզ և տրիխոցեֆալոզ):

Սահմանվել են ասկարիդի և մազագլխի ձվիկների նախնական զարգացման զոնաները: Ձվիկների նախնական զարգացման ժամանակահատվածներով Հայաստանի հողում բաժանվել են չորս գոտիների, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսներին: Յետագայում սահմանվել են ասկարիդի և մազագլխի ձվիկների զարգացման ավարտի գոտիները: ձվիկների զարգացման ավարտի ժամանակահատվածներով հողում բաժանվել են 3 գոտիների, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին:

Հայաստանի տարածքը, ջերմաստիճանի կորագծի 13°C-ից բարձր և 13°C-ից ցածր հատվածում, սահմանում է միջին ամսեկան ջերմաստիճանի գոտիները, որտեղ տեղի են ունենում ասկարիդի և մազագլխի ձվիկների մետամորֆոզը, ինչպես նաև արտաքին միջավայրում որոշվում է նրանց վարքագիծը:

Այս առումով, Հայաստանի ողջ տարածքը մեր կողմից բաժանվել է 7 գոտիների, ըստ ամիսների քանակի, որի ժամանակ մեկից մինչև յոթ ամսվա ընթացքում հնարավոր է ասկարիդի և մազագլխի ձվիկների զարգացում:

Քարտեզագրման բոլոր տեսակների ժամանակ որոշվել է այսպես կոչված «գրոյական գոտի», որտեղ բարենպաստ ջերմաստիճանները բացակայում են և բացակայում է գեոհելմինթոզների ձվիկների մետամորֆոզը:

Նման քարտեզագրման հիման վրա, համաճարակաբանական ծառայության գործնական հաստատությունների գործունեության պլանավորման և աշխատանքի հարմարավետության համար ասկարիդի և մազագլխի ձվիկների մետամորֆոզի սկզբի, ավարտի ժամանակահատվածների և տևողության ֆենոլոգիական գոտևորումը հանրապետության հողում անց է կացվել ըստ շրջանների: Հանրապետության ողջ տարածքը բաժանվել է 4 գոտիների. հողում գեոհելմինթոզների ձվիկների զարգացման սկզբից՝ ապրիլից մինչև հուլիս և ավարտվել օգոստոսից մինչև հոկտեմբեր ամիսներին:

Հայաստանի տարածքների տիպավորման ստացված քարտեզներն, ըստ գեոհելմինթոզների, թույլ են տալիս հանրապետության յուրաքանչյուր տարածքում նվազագույն տնտեսական ծախսերով պլանավորել համաճարակաբանական և սանիտարա-հիգիենիկ համալիր միջոցառումների անցկացում՝ ուղղված պայքարին և կանխարգելմանը: